

«ՀԱՅԵԼԻ ՎԱՐՈՒՑԻ» ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ՔՆԱՐԻԿ ՏՅՈՒՂԱՎԹՅԱՆ

XVII դ. սկզբներից արևմտաեվրոպական և սլավոնական գրականություններում լայն տարածում գտած «Մեծ հայելի» («Speculum Magnum») բարոյախոսական պատմվածքների ժողովածուն նույնքան ճանաչված էր հայ գրականության մեջ, ևատինական բնագրի նախօրինակը կազմվել է 1480 թ.¹ անանուն կազմողը նյութը քաղել է ավելի քան 60 հեղինակներից: 1605 թ. ժողովածուն լրացրել, վերամշակել է բելգիացի մատենագիր Հովհաննես Մայորը² և կոչել «Մեծ հայելի»: Վերջինս մասնագետների կողմից գնահատվել է որպես Վերածննդի հուշարձան: Օ. Ա. Դերժավինյան իրավացիորեն նկատում է. «Գրքում ֆեոդալների և հոգևորականության արատների մասին խոսելիս հանգես եկող քննադատական ոգին և ազատությունը տվյալ ժողովածուն տանում են միջնադարից դեպի Վերածնունդ, երբ կատարվում էր արժեքների վերագնահատում և տապալվում էին հին իդեալները»³:

XVII—XVIII դդ. «Մեծ հայելին» բազմիցս հրատարակվում և ամեն անգամ լրացվում է խմբագիրների ու հրատարակիչների կողմից, իսկ նրա հեղինակների թիվը հասնում է 80-ի⁴: XVII դ. սկզբներին Սիմոն Վիսոցկին ժողովածուն թարգմանում է լեհերեն և հրատարակում 1612 թ.⁵: 1677 թ. այն թարգմանվում է նաև ռուսերեն. որոշ ժամանակ անց լույս է տեսնում ռուսերեն երկրորդ թարգմանությունը⁶: XVII դ. «Մեծ հայելին» թարգմանվում է նաև հայերեն՝ «Հայելի վարուց» խորագրով: Թարգմանիչն է հայ գրական խոշոր գործիչ Ստեփանոս Լեհացին:

Ստեփանոս Լեհացուն ժամանակակից Առաքել Դավրիժեցին հիշատակում է մինչև 1662 թ. (Դավրիժեցու Պատմության ավարտի թվականը) Լեհացու

¹ Ժողովածուն հրատարակվել է Նիդերլանդներում, կազմողի մահից մեկ տարի հետո, վերնագիրն է. «Speculum exemplorum ex diversis, libris in unum laboriose collectum», Daventriae, 1481; П. В. Владимиров, Великое Зерцало. Из истории переводной литературы XVII века, М., 1881, с. 1 (այսուհետև՝ П. Владимиров).

² Հովհաննես Մայորի խմբագրած ժողովածուի վերնագիրն է. «Speculum Magnum exemplorum ex pluzquam LX authoribus pletate... (П. Владимиров, с. 6).

³ Օ. А. Державина, Великое Зерцало, М., 1965, с. 154 (այսուհետև՝ О. Державина).

⁴ П. Владимиров, с. 14.

⁵ Լեհերեն առաջին հրատարակության թվականը՝ 1612, մեղ հաղորդել է լեհ հայագետ Անջի Գրասիլը, որն այդ տեղեկությունը քաղել է Jadwiga Rudnicka, Bibliografia powieści polskiej 1601-1800 (Wrocław-Warszawa-Kraków, 1964) գրքից: Դերժավինայի գրքում հիշատակված 1621-ը որպես առաջին հրատարակության թվական (տե՛ս Օ. Державина, с. 20), բայց Jadwiga-ի՝ Լեհերեն թարգմանության երկրորդ հրատարակությունն է:

⁶ Ռուսերեն թարգմանության մասին տե՛ս նաև՝ П. В. Владимиров, К исследованию о „Великом Зерцале“, Казань, 1885.

կատարած շորս թարգմանությունը: Դրանք են՝ Հովսեփոսի «Հրեական պատերազմի մասին», Դիոնիսիոս Արեոպագացու «Յաղագս երկնայնոց քահանայապետութեանց», Պրոկլի «Գիրք պատճառացը» և «Հայելի վարուցը»: Այժմ հայտնի են Լեհացու գրչին պատկանող 10-ից ավելի թարգմանություններ⁷: Դրանցից ամենատարածվածը «Հայելի վարուցն» է:

Մինչև այժմ «Հայելի վարուցով» զբաղվել են Գ. Տեր-Մկրտչյանն ու Ն. Ակիրյանը: Առաջինը՝ ավելի հանգամանալից, իր իսկ խոստովանությամբ, Մառի «Վարդանի առակների» կապակցությամբ: Մառի հրատարակած գրքի առիթով Գ. Տեր-Մկրտչյանը ձեռնարկել է «...այդ սովոր և բազմաբովանդակ երկասիրության մեջ հեղեղված հայ միջնադարյան մատենագրության պատմության վերաբերյալ մի քանի խնդիրների լուսաբանությունը»⁸, երկրորդը՝ Ստեփանոս Լեհացու կենսագրության և գրական ժառանգության հարցերի հետ կապված:

Գ. Տեր-Մկրտչյանին հայտնի է եղել «Հայելի վարուցի» 7 ընդօրինակություն (5 ամբողջական և 2 թերի), որոնք նա նկարագրել է՝ հրապարակելով դրանց հիշատակարանները⁹: Մեծանուն հայագետի ձեռքի տակ եղած ընդօրինակություններին ավելացնենք Երևանի Մ. Մաշտոցի անվան մատենադարանի և սփյուռքի գրադարաններում պահվող ևս 46 ընդօրինակություն. ըստ որում դրանցից մի մասը հայտնաբերել ենք ձեռագրացուցակներում և «Հարանց վարքերի» շարքում: Գ. Տեր-Մկրտչյանին անծանոթ բազմաքանակ ընդօրինակություններն առաջին հերթին վկայում են «Հայելի վարուցի» լայն տարածման մասին: Ժողովածուի հայտնի ամենավաղ ընդօրինակությունները 1660 թ. ևս¹⁰, 1670 թ. հետո ձեռագրերի ընդօրինակությունների թիվը աճում է. կան 1671, 1672, 1679, 1682, 1690, 1692, 1699 և այլ թվականների ընդօրինակություններ: Թեև 1702 թ., այսինքն՝ «Հայելի վարուցի» թարգմանությունից մոտ 50 տարի անց, ժողովածուն հրատարակվել է¹¹, այնուամենայնիվ նրա ձեռագրական կյանքը շարունակվել է XVII—XIX դդ.: Հետագա ընդօրինակությունները պարունակում են ձեռագրական այնպիսի տվյալներ, որոնք նոր լույս են սփռում Ստեփանոս Լեհացու կյանքի առանձին դրվագների, նրա գրական գործունեության վրա: Այդ կարգի տեղեկություններից է «Հայելի վարուցի» թարգմանության թվականի ճշգրտումը:

7 Ն. Ակիրյան, Ստեփանոս վարդապետ Լեհացի («Հանդես ամսօրյա», 1912, № 1, էջ 147—153):

8 Գ. Տեր-Մկրտչյան, Հայկականք («Արարատ», 1899, № 7, էջ 299):

9 Նույն տեղում, էջ 354—357:

10 Գ. Տեր-Մկրտչյանին հայտնի է եղել «Հայելի վարուցի» 1660 թ. միայն մեկ ընդօրինակություն, որի գրիչն է Գրիգոր Երևանցին: Ահա վերջինիս հիշատակարանը. «Գրեցաւ ի թուականիս հայոց հազար հարիւր եւ ինն (=1660), ձեռամբ անարժան Գրիգոր Երևանցոյ. արդ զվայելօղջոյ մաղթեմ որ զկնի երթեցման (ընթերցման) ձերոյ յիշման արժան առնեք զիս և զծնողսն իմ (էջ 171ա), («Արարատ», 1899, № 9, էջ 354—355): Այժմ հայտնի է 1660 թ. ևս մեկ ընդօրինակություն, որի գրիչը նույնպես Գրիգոր Երևանցին է: Այդ ընդօրինակությունը գտնվում է Մատենադարանի № 7004 ձեռագրում (էջ 138—311), ուր պահպանվել է Գրիգոր Երևանցու հիշատակարանը. «Գրեցաւ ի թուականիս հայոց հազար հարիւր և ինն (=1660). ձեռամբ անարժան Գրիգորի Երևանցոյ. Արդ՝ զվայելօղջոյ մաղթեմ զի զկնի ընթերցման ձերոյ յիշման արժան առնեք զիս և զծնողսն իմ» (էջ 311):

11 «Գիրք Հայելի վարուց, որ ասի Հարանց վարք: Տպագրեցեալ ի հայրապետութեան Տեանն Նահապետի հայոց կաթողիկոսի ի թվին Քրիստոսի 1702» (այսուհետև՝ «Հայելի վարուց»):

Մատենադարանի № 789 ձեռագիրը գրված է ամենավաղ ընդօրինակությանն ենթարկելից շուրս տարի հետո՝ 1664 թ., ուր նշվում է «Հայելի վարուցի» թարգմանության թվականը՝ 1651 թ.¹² Այս ձեռագրում զետեղված են «Հարանց վարքն» ու «Հայելի վարուցը»։ Պահպանված երկու հիշատակարաններից՝ 1633 և 1664 թթ., տեղեկանում ենք, որ ձեռագիրը սկզբնապես եղել է միայն «Հարանց վարքի» ընդօրինակություն։ Ձեռագրի 1633 թ. հիշատակարանում (էջ 534ա) խոսվում է «Հարանց վարքի» ընդօրինակման թվականի, վայրի և գրչի մասին. «Գրեցաւ սուրբ գիրքս՝ որ կոչի հարանց վարք. ի թվին ՌՋԲ (=1633) ի մայրաքաղաքն Կոստանդինուպոլիս»։ Ձեռամբ վարդան սարկաւազի ի վայելումն Գրիգորի վարդապետի ղեթոնցոյ. աստուած բարով վայելել տացէ իւրեանն...»։ Ինչպես նկատում ենք, ձեռագիրը եղել է վարդապետ Գրիգորի սեփականությունը։ 1664 թ. հիշատակարանը (էջ 6—7) պատկանում է ձեռագրի հաջորդ տիրոջը՝ Եփրեմ արեղային։ Այստեղ լրացուցիչ տեղեկություններ կան «Հարանց վարքի» նախկին տիրոջ՝ Գրիգորի, ձեռագրի պատմության, նրա հետագա փոփոխությունների և, ամենակարևորը, «Հայելի վարուցի» հայերեն թարգմանության թվականի մասին։ Ըստ այդ հիշատակարանի, Եփրեմ արեղան «ի սփիւռս Կիլիկիցւոց» հանդիպել է ոմն Գրիգոր վարդապետի «տեղեւ զեյթունցի», որը երաժիշտ էր՝ «ոչ սակաւավարժ յերաժշտականն արուեստ»։ «Եւ մեր տեսեալ զնա քաջ ի գիտութիւն յայն,— գրում է Եփրեմ արեղան,— աշակերտեցաք նմա քանի մի ամս»։ Եփրեմի ուսումը Գրիգորի մոտ ընդհատվում է վերջինիս մահով։ Գրիգորի եղբորորդին վաճառում է հանգուցյալի իրերը. «Հարանց վարքի» ձեռագիրը գնում է Եփրեմը՝ «իբրու յիշատակ օրհնութեան ի նմանէ առ յիս»։ Մանոթիւնաւով ձեռագրին, Եփրեմը տեսնում է, որ «Հարանց վարքը» «ծայրաքաղ արարեալ է յամենայն տեղիւ» մինչև վերջին գլուխը և պարբերաբար մաքուր էջեր են բաց թողնված։ «Թէ զինչ պատճառք էին թողեալ՝ միայն աստուծոյ է գիտելի»,— գրում է նա։ Եվ ինքը «զցայտ է զցորեկ» մտածում է, որ «հանդիպէսցի իր ինչ պատշաճաւոր», որպեսզի դրանով լրացնի ձեռագիրը։ Այդ ընթացքում նրա ձեռքն է ընկնում «Հայելի վարուցի» մի գրչագիրը, որով և Եփրեմը լրացնում է «Հարանց վարքի» բաց էջերը։ Ահա այդ հիշատակարանի մեզ հետաքրքրող մասը. «Հանդիպեցաւ մեզ այս կարճառօտ գիրք, որ ասի հայելի վարուց, որ սոյն ինքն է հարանց վարք ֆռանկաց մեկնեալ լատինացոցն լեզուէ ի հայս ումեմն Ստեփանոսի բանասիրի իլովացոյ հայոց վարդապետի երկրորդ թարգմանչի յաստուածաէջ զահոյս սուրբ էջմիածնի. ի թուականութեանս հայկական զարմի ՌՃ-երորդի (=1651)»¹³։

Այսպիսով, Եփրեմ արեղան ձեռքի տակ ունեցել է «Հայելի վարուցի» մի այնպիսի ձեռագիր, ուր ասված է եղել, որ Ստեփանոս Լեհացի վարդապետը 1651 թ. այն թարգմանել է լատիններենից։ Սա չէր կարող լինել 1660 թ. «Հայելի վարուցի» երկու ընդօրինակություններից որևէ մեկը, քանի որ դրանցում խոսք չկա ո՛չ թարգմանության թվականի, ո՛չ հեղինակի, և ոչ էլ այն մասին,

¹² Մ. Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 789, էջ 6—7 (այսուհետև՝ Մատենադարան)։

¹³ Մատենադարան, ձեռ. № 789, էջ 7։

թև որ լեղվից է թարգմանվել ժողովածուն: Եփրեմ արեղայի ձեռքի տակ ևղած «Հայելի վարուցի» գրչագիրը, հավանաբար, 1664 թ. վաղ գրված և ընտիր օրինակ է հղել: Այդ է վկայում հանգամանալից ժանոթությունը Եփրեմի ընդօրինակության հետ, որը «Հայելի վարուցի» մի ամբողջական օրինակ է՝ լրիվ ցանկով, բոլոր 71 գլուխներով և պատմություններով: Բացակայում են միայն 1702 թ. հրատարակված «Հայելի վարուցի» այն երեք օրինակները, որոնք արված են «Վերջ» բառից հետո: Ցանկն ու բնագրի գլուխների դասավորությունը համապատասխանում են իրար: Եփրեմն իր հիշատակարանում խնդրում է, որ ձեռագրի հետագա ընդօրինակողները առանձնացնեն «Հայելի վարուցը» «Հարանց վարքից» և արտագրեն «շխառնելով զերկուսն ի մի, այլ գրել յատուկ յատուկն զի երկուքն ևս կատարեալ գրեանք են»¹⁴:

«Հայելի վարուցի» թարգմանության թվականը (1651 թ.), որի հիշատակման (1664 թ.) վաղեմությունը չենք կարող անտեսել, որոշ ճշգրտումներ է մտցնում Ստեփանոս Լեհացու կենսագրության և գրական-թարգմանական գործունեության մեջ: Ըստ 1664 թ. հիշատակարանի, Ստեփանոս Լեհացին վարդապետ է դարձել ոչ թե 1653—1656 թթ., ինչպես, հենվելով մի ծառցի հիշատակարանի վրա, ընդունում է Ն. Ակինյանը¹⁵, այլ 1651 թ. ավելի վաղ: Այդ է հաստատում նաև Ն. Ակինյանի բերած մի այլ տեղեկություն, որը նա կարեւոր է համարում Ստեփանոսի կենսագրության համար: Ըստ այդ տեղեկության Յիսուս Որդին ընդօրինակվել է «ի ս. էջմիածին, յիւովացէ Ստեփանոս վարդապետէ ի թուին հայոց ՌՂԵ (=1646)»¹⁶:

Գ. Տեր-Մկրտչյանը նույնպես ենթադրում է, որ «Ստեփանոսի վարդապետանալը Փլիլպպոսի մահվան թվականից՝ 1656 մարտի 25-ից, առաջ է և թերևս տարիներով առաջ»¹⁷: Ըստ «Հայելի վարուցի» թարգմանության նորահայտ թվականի, այն Ստեփանոս Լեհացու անդրանիկ թարգմանությունն է: Գ. Տեր-Մկրտչյանը (նրա հետ համամիտ է նաև Ն. Ակինյանը), ինչպես տեսանք, «Հայելի վարուցի» թարգմանության թվականն ընդունել են 1660-ը՝ հենվելով առաջին հերթին ամենավաղ ընդօրինակության թվականի և լրացուցիչ տեղեկություններ հաղորդող այլ աղբյուրների վրա: Դրանք են. 1. Առաքել Դավրիժեցու Պատմության ավարտի թվականը՝ 1662 թ., առերմն և նրա հաղորդածները այդ թվից առաջ են տեղի ունեցել»¹⁸: 2. Ստեփանոս Լեհացու 1660 թ. ինքնագիր հիշատակարանը Հովսեպոսի Պատմության թարգմանության մասին: Քանի որ Հովսեպոսի թարգմանության թվականը Ստեփանոսը նշել է 1660-ը, իսկ «Հայելի վարուցի» ամենավաղ ընդօրինակությունը նույնպես 1660 թ. է, Գ. Տեր-Մկրտչյանը եկել է այն եզրակացության, որ «Լեհացին 1660-ին ավարտելով Հովսեպոսը թարգմանեց և Հայելին»¹⁹: 3. Դիոնիսիոս Արեոպագացու 1662 թ. «Յաղագս երկնայնոց քահանայապետութեանց» թարգմանության Ստեփանոս Լեհացու ինքնագիր հիշատակարանը: Սակայն դժվար չէ նկատել, որ Դիոնիսիոս Արեոպագացու հիշատակարանում և Դավրիժեցու մոտ Լեհացու թարգմանությունները ժամանակագրական կարգով չեն թվարկ-

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ «Հանդես ամսօրյա», 1912, № 1, էջ 62:

¹⁶ Նույն տեղում (ծանոթ. 6):

¹⁷ «Արարատ», 1899, № 10, էջ 451:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում, էջ 453:

ված: Դիոնիսիոս Արեոպագացու «Յաղագս երկնայնոց քահանայապետութեանց» հիշատակարանում գրված է. «...և յառաջ քան զայս (Յաղագս երկնայնոց քահանայապետութեանց)»—Ք. Տ.—Դ.), այլ շարադրութիւնս թարգմանեցի, այսինքն Յովսէպոս Պատմագիր և միւս գիրս, որ ասի Պատճառաց և Հարանց վարք, որ կոչի Հայելի Վարուց ի լեհաց բարբառոյ ի հայ լեզու փոխարկեցի...»²⁰ Առաքել Դավրիժեցին գրում է. «Եւ ինքն Ստեփաննոս վարդապետ... թարգմանեաց շորս գիրք ի Լատին գրոյ և ի լեզուէ ի Հայ գիր և ի լեզու: Որոց մինն է Յովսէպոս պատմագիրքն, բայց ոչ ըզբովանդակն... Եւ երկրորդ՝ Դիոնէսիոս Արիսպագացւոյ գիրքն... Եւ երրորդ գիրք մի է, որոյ անուն է՝ գիրք պատճառաց... Չորրորդն գիրք՝ բանք առակաւորք, որ զվարուց և զկենցաղաւարութենէ մարդկան պատմէ, իբր թէ օրինակ ամենայն մարդկան, որոյ մակագրութիւնն էր Լատին լեզուան, հայելի վարուց, և յորժամ թարգմանեցին ի Հայոց լեզու, այլուի զնոյն մակագրութիւնն մակագրեցին հայելի վարուց. և յոյժ համեղ և ախորժ են բանք այս գրոյս»²¹: Այստեղից դժվար չէ նկատել, որ Դիոնիսիոս Արեոպագացու երկի հիշատակարանում և Առաքել Դավրիժեցու Պատմութեան մեջ լեհացու թարգմանութիւնները տարբեր հաջորդականութեամբ են թվարկված: Այսպես. Արեոպագացու հիշատակարանում՝ 1. «Յովսէպոս», 2. «Պատճառացն», 3. «Հարանց վարք», 4. «Յաղագս երկնայնոց քահանայապետութեանց», իսկ Դավրիժեցու մոտ՝ 1. «Յովսէպոս», 2. «Դիոնէսիոս Արիսպագացւոյ գիրքն», 3. «Գիրք պատճառաց», 4. «Հայելի վարուց»: Բացի այս, թվարկելով Ստեփանոս լեհացու թարգմանութիւնները, Առաքել Դավրիժեցին Հովսէպոսի Պատմութեան մասին ասում է ոչ թե «որոց առաջինն է», այլ «որոց մինն է Յովսէպոս պատմագիրքն»: Ուստի, «Եւ երկրորդ», «Եւ երրորդ», «Չորրորդն» բառերը պետք է նշանակեն՝ «մյուսը», «հաջորդը», «այլը»:

Այսպիսով, Ստեփանոս լեհացու անդրանիկ թարգմանութիւնը եղել է «Հայելի վարուցը», իսկ թարգմանութեան թվականը՝ 1651-ը:

«Հայելի վարուցի» ընդօրինակութիւնների հիշատակարանները հակասական տեղեկութիւններ են հաղորդում հայերեն թարգմանութեան համար հիմք ծառայած բնագրի վերաբերյալ: Հենվելով այդ տեղեկութիւնների վրա, Գ. Տեր-Մկրտչյանն ու Ն. Ակինյանն այդ հարցում նույնպես հանգել են հակասական եզրակացութեան: Գ. Տեր-Մկրտչյանը, ելնելով Դիոնիսիոս Արեոպագացու թարգմանութեան՝ Ստեփանոս լեհացու ինքնագրի վերոհիշյալ հիշատակարանից²², գտնում է, որ թարգմանութիւնը կատարված է լեհերենից²³, Ն. Ակինյանը ստույգ է համարում Առաքել Դավրիժեցու և Ֆ 678 ձեռագրի տեղեկութիւնները: Դրանց համաձայն, թարգմանութիւնը կատարված է լատիներենից²⁴:

²⁰ Նույն տեղում, էջ 453:

²¹ «Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ», Վաղարշապատ, 1884, էջ 408—409 (այսուհետև՝ Առաքել Դավրիժեցի):

²² Ն. Ակինյանն անվավեր և աղճատված է համարում Դիոնիսիոս Արեոպագացու երկի թարգմանութեան Ստեփանոս լեհացու ինքնագիր հիշատակարանը («Հանդես ամսօրյա», 1912, № 1, էջ 149—150):

²³ «Արարատ», 1899, № 10, էջ 453:

²⁴ 1673 թ. ձեռագրի «Հայելի վարուցի» ընդօրինակող Սուբիաս սարկավագ Ղափանցու հիշատակարանում գրված է. «...թարգմանեալ եղեւ ի Լատին բարբառոյն ի հայ բարբառ ձե-

Այդ երկու հիշատակարաններին կարելի է ավելացնել ևս երեքը՝ Մատենադարանի №№ 789 (1664 թ.), 7906 (1682 թ.) և 8782 (1703 թ.) ձեռագրերի «Հայելի վարուցի» ընդօրինակությունների հիշատակարանները:

1. Ձեռ. № 789 (1664 թ.): Ստացող և գրիչ Եփրեմ աբեղա. հիշատակարանը. «...հանդիպեցաւ... Հայելի վարուց, որ սոյն ինքն է հարանց վարք ֆռանկաց մեկնեալ լատինացոցն լեզուէ ի հայս ումեմն Ստեփանոսի... ՌՃ-հրորդի (1651)»²⁵:

2. Ձեռ. № 7906 (1682 թ.): Գրիչ Աստվածատուր. հիշատակարանը՝ «Ստեփանոս վարդապետի լեհացուց թարգմանեալ զգիրս յայս ի լատինացուց գրոց ի հայս ի խնդրոյ հարց և եղբարց միանձանց կրօնաւորաց և միանգամայն եղևոց ի սուրբ յաթոռն էջմիածնի: Եւ անուանեալ զսայ կոչութեամբ գիր Հայելի վարուց և ըստ հայումս Հարանց վարք»²⁶:

3. Ձեռ. № 8782 (1703 թ.): Գրիչներ՝ Նիկողայոս և Այվազ դպիրք: Ընդօրինակությունը ունի ցանկ՝ հետևյալ վերնագրով. «Յանկ գրոցս յայսմիկ, որ է սայ ի գրոց ֆռանկաց ի Թէոդորոս վարդապետէ թարգմանեալ ի լեհ քաղաքի. և անուամբ դիրքս Հայելի վարուց մարդոց»²⁷:

Այսպիսով, մեր ձեռքի տակ եղած հինգ հիշատակարաններից երկուսում (ձեռ. №№ 789, 678) և Առաքել Դավրիժեցու մոտ ուղղակի ասված է, որ թարգմանությունը կատարվել է լատիներենից, մեկում՝ լեհերենից (ձեռ. № 3017), իսկ երկուսում՝ «ի լատինացուց գրոց ի հայս», «ի գրոց ֆռանկաց» (ձեռ. №№ 7906, 8782): Այս վերջին բառերի տակ կարելի է ենթադրել ինչպես լատիներենը, այնպես և հայերենի թարգմանված կաթոլիկ գրվածքները, ուրեմն և՛ լեհերեն լեզուն: Գ. Տեր-Մկրտչյանը, «Հայելի վարուցի» թարգմանության բնագրի լեզվի հարցում նախապատվությունը տալով լեհերենին, հետևյալ միտքն է արտահայտել. «Նրա (Ստեփանոս լեհացու—Ք. Տ.—Դ.) միամիտ և օտար, մասնավորապես եվրոպական լեզուներին անծանոթ ժամանակակիցները ամենայն դուրսովյալ կարող էին շփոթել լատիներենն ու լեհերենը, կամ այս վերջինը համարել միևնույն լատիներենի հետ»²⁸: Ինչևէ, եղած հիշատակարանները հնարավորություն չեն տալիս պարզելու, թե որ լեզվից է կատարված թարգմանությունը: Այստեղ մեզ օգնության է գալիս հայերեն բնագրի համեմատությունը լեհերեն ու լատիներեն բնագրերի հետ: Պարզվում է, որ հայերեն թարգմանության մեջ կան լեհերեն թարգմանության հավելումներից: Դրանցից է «Վասն մարդասպանութեան»²⁹ գլխի երկու օրի-

ոամբ Ստեփանոս վարդապետի իլովացուց, որ է վերակացու ևս գանձապետ ի սուրբ կաթողիկոսարանն էջմիածնի» (էջ 173բ):

²⁵ Մատենադարան, ձեռ. № 789, էջ 6—7:

²⁶ Նույն տեղում, ձեռ. № 7906, էջ 125:

²⁷ Հատ երևութին, սա Ստեփանոս լեհացու հարազատ եղբայր (ըստ Ալիշանի, իսկ ըստ Օրմանյանի՝ եղբորորդի) Թեոդորոս Վարդանյան հպիսկոպոսն է, որը մահացել է Հոկտեմբեր 1700 թ. (Ղ. Ալիշան, Կամենեց, Տարեգիրք հայոց, Վենետիկ, 1896, էջ 259, նաև՝ Մ. Օրմանյան, Ազգապատում, Բելյուսթ, 1960, էջ 2596): Ունեցել է արդյոք Թեոդորոս վարդապետը որևէ մասնակցություն «Հայելի վարուցի» թարգմանության մեջ (գուցե նյութն է հավաքել), դժվար է ասել: Համենայն դեպս, № 8782 ձեռագրի մանրամասն համեմատությունը «Հայելի վարուցի» հրատարակության հետ, ցույց տվեց նրանց կատարյալ նույնությունը:

²⁸ «Արարատ», 1899, № 10, էջ 453:

²⁹ «Հայելի վարուց», էջ 190—192:

նակներին առաջինը, ուր բերվում է լեհ իշխան Պոպելի սպանության պատմությունը, որը լեհ խմբագիրները ներմուծել են Կրոմերի գրքից³⁰։ Մեր խնդրանքով լեհ հայագետ Անջեյ Պիսովիչը համեմատել է հայերեն թարգմանության 10 օրինակ³¹ և եկել այն եզրակացության, որ հայերեն թարգմանությունը համընկնում է լեհերեն տեքստի հետ, բայց որոշ տեղերում հայերեն տեքստը հավելյալ նախադասություններ ունի։ Պիսովիչի կարծիքին ավելացնենք նաև մեր կատարած պրպտումների արդյունքը։ Դերժավինայի գրքում բերված լեհերեն և առաջին ռուսերեն թարգմանությունների օրինակների մի շարք հատվածների համեմատությունը հայերեն թարգմանության համապատասխան հատվածների հետ ցույց է տալիս, որ հաճախ վերջինս ավելի հարուստ է լեհերենին, քան ռուսերեն թարգմանությունը, որը ուսումնասիրողները դժգոհանալ են որպես լեհերենի բառացի թարգմանություն³²։

Այսպես, լեհերեն բնագրին ամբողջովին համապատասխանում է Վասն Մեծատան» գլխի երկրորդ նովելը՝ տխուր հարուստի և ուրախ աղքատի մասին։

Հանդիպում են նախադասություններ, որոնք ճշտորեն վերարտադրում են լեհերենը։

Օրինակ, հայերեն թարգմանության մեջ կա լեհերենի³³ «[rasowal sie tedy» (և վարանէր ի միտս իւր» արտահայտությունը)³⁴, որը բացակայում է ռուսերեն թարգմանությունում։

Լեհերենի «na tum a na tum»³⁵ և հայերենի «յայս ինչ տեղուջ»-ի³⁶ փոխարեն ռուսերենն ունի «у дверей взял еси», իսկ «[naczey 'dam cle obiesic»-ի և ապա թէ ոչ տաց գքեզ կախնը»-ի փոխարեն՝ «повелю ты смерти предати»։

Վասն աղօթից» գլխում ռուսերենի «супостаты»-ի (թշնամիների) փոխարեն լեհերենն ունի «wielka moc perwzyiacial»³⁷, հայերենը՝ «զմեծ բազմութիւն թշնամեաց»³⁸, Վասն հոգւոյ» գլխում ռուսերենի «за толпо и за толпо»-ի փոխարեն լեհերենն ունի «Za tak»³⁹, իսկ հայերենը՝ «այսքան»⁴⁰։

Համեմատությունը ցույց է տալիս լեհերենի և հայերենի բառացի համընկնումը։ Ուստի, պարզ է, որ Ստեփանոս Լեհացին թարգմանել է լեհերենից։ Օգտվել է արդյոք նա նաև լատիներեն բնագրից, ցույց կտա հայերեն թարգմանության համեմատությունը վերջինիս հետ⁴¹։ Բայց որ նա անպայման

³⁰ Ալդ յասին տե՛ս А. Пыпин, Очерк литературной истории повестей и сказок русских, СПб., 1857, с. 202, նաև՝ П. Владимиров, с. 31.

³¹ Որի համար խորին շնորհակալություն ենք հայտնում։

³² П. Владимиров, с. 41—44; О. Державина, с. 28—45.

³³ Ռուսերեն և լեհերեն համապատասխան հատվածները տե՛ս О. Державина, с. 41.

³⁴ «Հայելի վարուց», էջ 224—225։

³⁵ О. Державина, с. 41.

³⁶ «Հայելի վարուց», էջ 223։

³⁷ О. Державина, с. 45.

³⁸ «Հայելի վարուց», էջ 13։

³⁹ О. Державина, с. 45.

⁴⁰ «Հայելի վարուց», էջ 180։

⁴¹ Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի ասպիրանտ Արմենուհի Արզարյանը կատարում է այդ աշխատանքը։

ծանոթ է ևղև լատիներեն բնագրին, դրանում կասկած չկա: Այդ է վկայում Առաքել Դավրիժեցու հետևյալ տեղեկությունը. «...մակադրութիւնն էր լատին լեզուան հայկի վարուց, և յորժամ թարգմանեցին հայոց լեզու այլուր ղնոյն մակադրութիւնն մակադրեցին»⁴²: Այսինքն, «Հայկի վարուց» և ոչ «Մեծ հայկի»: Այստեղ Առաքել Դավրիժեցին, կարծում ենք, նկատի ունի «Մեծ հայկի» 1480 թ. լատիներեն նախօրինակը, որի անվանումն էր «Հայկի օրինակաց»: «Հայկի վարուց» խորագրին Ստեփանոսը ավելացրել է «Հարանց վարր ֆուսնկաց»-ը, ցանկանալով ընթերցողին հուշել, թե ինչ է իրենից ներկայացնում ժողովածուն:

Ժողովածուի հայերեն թարգմանության 53 ընդօրինակությունից միայն մի քանիսի⁴³ վերնագրում է հիշատակվում Ստեփանոս Լեհացու անունը որպես թարգմանչի: Մնացածներում, որոշ տարբերություններով, այն ունի հետևյալ վերնագիրը. «Հայկի վարուց, որում կան հեշտալուրք պատմութիւնք և բանք օգտակարք վասն փրկութեան մարդկան»⁴⁴: Իսկ ավելի հաճախ բնագիրն սկսվում է այսպես. «Ցանկ գրոցս, որ ասի Հարանց վարք ֆուսնկաց»⁴⁵, № 7906 (1682 թ.) ձեռագրի հիշատակարանում ասված է. «Գիրք որ կոչի Հայկի վարուց, իսկ ի մերումս Հարանց վարք»⁴⁶:

Ինչ է իրենից ներկայացնում «Հայկի վարուցի» հայերեն թարգմանությունը: Լատիներենի, լեհերենի, ռուսերենի համեմատությամբ հայերեն թարգմանությունը խիստ համառոտ է: «Հայկի վարուցի» ամբողջական ընդօրինակությունները բաղկացած են 71 գլխից և 247 օրինակից: Բավական է համեմատել այս թվերը լատիներեն բնագրի, լեհերեն և ռուսերեն թարգմանությունների թվական տվյալների հետ, որպեսզի պատկերացում կազմենք հայկական տարբերակի ծավալի մասին:

«Spesulum exemplorum»-ում (1480 թ. ժողովածու) օրինակների քանակը 1266 էր: Հովհաննես Մայորը դրանց ավելացրեց 160 օրինակ և դարձավ 1426: Ավելի ուշ հրատարակություններում օրինակների թիվը հասնում է 2000⁴⁷: Մոտավորապես նույնքան է լեհերեն թարգմանության օրինակների քանակը⁴⁸, իսկ «Հայկի վարուցի» ռուսական ձեռագրերի օրինակների մեծահաճախ հանդիպող թիվը 850 է⁴⁹:

Համառոտելով «Մեծ հայկին» Ստեփանոս Լեհացին ավելի նպատակահարմար է գտել վերականգնել նախօրինակի (1480 թ.) անվանումը՝ «Հայկի վարուց»: Միաժամանակ, նա կատարել է օրինակների խիստ ընտրություն, որոշակի դրոշմ է թողել «Հայկի վարուցի» հայկական տարբերակի վրա: Գլուխների և օրինակների տեղադրման սկզբունքը հայերենում նույնպես

⁴² Առաքել Դավրիժեցի, էջ 408:

⁴³ Մատենադարան, ձեռ. № 789, 7906, 678 և այլն:

⁴⁴ Նույն տեղում, ձեռ. №№ 5160, 3294, 677, 692 և այլն:

⁴⁵ Նույն տեղում, ձեռ. № 8782, «Ցուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարյան մատենադարանի ի Վիեննա», հ. Բ, կադմեց հ. Համ. Ոսկյան, Վիեննա, 1963, ձեռ. № 578 և այլն:

⁴⁶ Նույն վերնագրին ունեն նաև Մատենադարանի №№ 789, 678 ձեռագրերի «Հայկի վարուցի» ընդօրինակությունները:

⁴⁷ П. Владими́ров, с. 4—15.

⁴⁸ Խոսքը 1635 թ. հրատարակության մասին է. Վլադիմիրովի տվյալներով լեհերեն թարգմանության օրինակների քանակը 2309 է, սակայն Դերժավինայի ճշտումների համաձայն, այն հավասար է 1945-ի (О. Державина, с. 23—24).

⁴⁹ Նույն տեղում, էջ 50:

այրբենական է, ինչպես լատիններեն բնագրում և լեհերեն թարգմանության մեջ: Գլուխներն ունեն թեմատիկ բնույթ (օրինակ՝ «Վասն ազահութեան», «Վասն աղքատութեան» և այլն): Սակայն ի տարբերություն լատինների ու լեհերենի և սրանց հետևողությամբ ռուսերենի, ուր գլուխներից բացի յուրաքանչյուր օրինակ ունի իր վերնագիրը (սովորաբար դրանք ամբողջական նախադասություններ են), հայերենում օրինակներն առանց վերնագրերի են: դրանք պարզապես համարակալված են, ամեն մի գլուխ բաղկացած է 1—12 օրինակից: Հանդիպում են փոքրիկ, ընդամենը մի քանի տողանոց և բավական ընդարձակ՝ մի քանի էջանոց օրինակներ: Բայց ամենաբնորոշը մեկ-երկու էջանոց պատմություններն են:

Լատինական ժողովածուն թարգմանելով հայերեն, Ստեփանոս Լեհացին առաջին հերթին աշխատել է վերացնել նրա կաթոլիկական ոգին: Այս առումով հայերեն թարգմանությունը շատ ընդհանրություններ ունի ռուսերենի հետ: Լեհացին զանց է առել մի շարք պատմություններ, որոնց հերոսները կաթոլիկ եկեղեցու կարկառուն դեմքերից էին, վերացրել է ճիզվիտների խմբագրության արդյունք հանդիսացող ժողովածուի գիտական շղարշը և այլն: «Ապաղգայացնելով» օրինակները, Ստեփանոս Լեհացին տեղայնացրել է դրանք, դարձրել հասկանալի հայ ընթերցողին: Նա մի կողմից ժողովածուի պատմություններին հաղորդել է հետաքրքրաշարժություն, մյուս կողմից՝ ուժեղացրել դրանց բարոյախոսական հնչեղությունը:

Հայերեն թարգմանված օրինակների ընտրության մեջ, անշուշտ, արտահայտվել են Ստեփանոս Լեհացու վերաբերմունքը ժամանակի կյանքի շատ հարցերի նկատմամբ, հայ եկեղեցու դիրքորոշումը, հայերի դավանաբանական պատկերացումները և այլն: Ուստի, պատահական չէ «Հայելի վարուցի» հայերեն թարգմանության հանդես գալը Հայաստանի տնտեսական և մշակութային որոշակի տեղաշարժերի շրջանում: Մեծ Անապատի միաբանության գաղափարներին և պայքարին⁵⁰ ավելի քան համահնչուն էին «Հայելի վարուցի» բարոյախոսական պատմությունները, որի հայկական թարգմանության մոտ կեսը նվիրված է ֆեոդալների և հոգևորականության բարքերի քննադատությանը: Ընթերցողի աչքի առջևով անցնում են հարբեցող քահանաներ և վանքերի առաջնորդներ, անբարոյական ու մարդասպան եկեղեցականներ, որոնք միայն «զգեստիւք և ոչ վարուք, անուամբ և ոչ արգեամբք»⁵¹ էին կրոնավոր, և ավելի շատ ջանում էին «...ժողովել լինչս և զստացուածս և փառս աշխարհի՝ քան թէ հոգալ վասն փրկութեան ժողովրդեանն, և բարի օրինակ լինել հօտին իւրոյ»⁵²: Շեշտը դնելով բարոյախոսական-դաստիարակչական կողմի վրա, ժողովածուն թարգմանելիս Ստեփանոս Լեհացին զանց է առել պարերի, խաղերի, զարդերի, պճնանքի, հմայության վնասակարության, սնահավատ հակացությունների հետ կապված բազմաթիվ օրինակներ:

«Հայելի վարուցի» հայերեն տարբերակն ունեցել է նաև դեղարվեստական նպատակ. առաջին հերթին այն հենց այդպիսին էլ ընկալվել է ընթերցողներին կողմից: Առաքել Դավրիժեցին գրում է. «Եւ յոժ համեղ և ախորժ են բանք այս գրոյս»⁵³: Այս առումով ուշագրավ են ժողովածուի նովելատիպը

⁵⁰ Լեո, Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 1946, էջ 273—275:

⁵¹ «Հայելի վարուց», էջ 59:

⁵² Նույն տեղում, էջ 70:

⁵³ Առաքել Դավրիժեցի, էջ 409:

պատմությունները, որոնց մի մասը վաղուց արդեն թափանցել էր հայ միջ-
նադարյան գրականության և տեղայնացած տարբերակներով հանդիպում էր
առակներին, գրույցների ժողովածուներում:

К ВОПРОСУ О ПЕРЕВОДЕ «ВЕЛИКОГО ЗЕРЦАЛА» НА АРМЯНСКИЙ ЯЗЫК

КНАРИК ТЕР-ДАВТЯН

Резюме

Широко распространенный в западноевропейской и славянской ли-
тературе и столь же популярный в Армении сборник нравоучительных
рассказов «Великое Зерцало» был переведен на армянский язык Сте-
паносом Лехацы (XVII в.).

До сих пор точное время перевода сборника на армянский язык
было неизвестно. На основе рукописи Матенадарана им. Маштоца
(№ 789) удалось установить дату перевода—1651 г. Это уточнение от-
носит начало литературной деятельности Степаноса Лехацы к 50-ым
годам XVII века, что на целое десятилетие опережает ранее принятую
дату.

Памятные записи рукописей сообщают противоречивые сведения о
языке оригинала (латинский, польский), с которого сделан армянский
перевод. В армянском тексте имеются добавления польских редакто-
ров. Сличение отдельных статей армянского текста с соответствующи-
ми польскими статьями, а также с первым русским переводом, считаю-
щимся дословным переводом польского, показало, что армянский пере-
вод осуществлен с польского текста, но в то же время оно свидетель-
ствует и о хорошем знании переводчиком латинского оригинала.

В отличие от латинского, польского и русского текстов, армянская
версия «Великого Зерцала» сильно сокращена переводчиком. Степа-
нос Лехацы вытравливает из сборника католический дух, акцентирует
внимание читателя на воспитательно-нравоучительной стороне рас-
сказов. Армянский перевод «Великого Зерцала» преследовал и сугубо
художественные цели. В него вошло множество средневековых новелл
и сказов.